

Հաշվետվություն

ՀՀ. Գեղ. մարզի Խաչաղբյուր համայնքի ղեկավար Հակոբ Գաբոյանի 2011թ. գործունեության վերաբերյալ

Հարգարժան Խաչաղբյուրցիներ, ավագանու անդամներ, հյուրեր: Որպես համայնքի ղեկավար Ձեզ եմ ներկայացնում 2011թ. իմ գործունեության հաշվետվությունը:

Իմ աշխատանքային գործունեության շրջանում ղեկավարվել եմ «Տեղական ինքնակառավարման մասին» և ՀՀ «համայնքային ծառայության մասին» օրենքներով: Դրանց միջոցով կանոնակարգելով բնակչության իրավունքներն ու պարտականությունները, հնարավոր լուծում տվել համայնքում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական բազմապիսի խնդիրների որոշակի մասին:

Մեր համայնքը ունի 1452 բնակիչ, 2011թ. այն ավելացավ ևս 14 նորածին փոքրիկով: Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 9 հոգուց, համայնքի ավագանին 7 անդամներից է կազմված, որոնց համար պարբերաբար կազմակերպվել են օրենքների ուսումնասիրություններ ու ուսուցում:

Համայնքի բնակչության և նրանց իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել են հետևյալ պարտադիր լիազորությունները:

2011թ-ին հրավիրվել է ավագանու 7 նիստ ընդունելով 15 որոշում, կայացվել է գյուղապետի 9 որոշում: Կազմակերպվել և անցկացվել է համայնքի բնակչության հաշվառում, օժանդակվել այս տարի անցկացվել մարդահամարին: Մշտապես կազմակերպվել են քաղաքացիների ընդունելություններ, օրենքով սահմանված կարգով, հաշվի է առնվել քաղաքացիների դիմումներն ու բողոքները՝ ձեռնարկելով հնարավոր միջոցներ դրանց լուծում տալու համար: 2011թ. ստացվել է 108 դիմում, որոնցից 87-ը սոցիալական բնույթի են, 14-ը հողերից հրաժարվելու մասին, 7-ը՝ տարբեր:

2011թ. համայնքի բյուջեն ընդունվեց երկար քննարկումից հետո: Այն իրատեսական էր այնքանով, որքանով հնարավոր էր կատարել: Բյուջեի եկամտային մասում ներառված չէր հողի հարկի ամբողջ ապառքը, ինչը բնակչությունը անկարող է վճարել միջոցների բացակայության պատճառով: Հողօգտագործողների մի ստվար հատվածն էլ բացակայում է գյուղից, հողը մնացել է անմշակ:

Բյուջեի եկամտային մասը կազմում էր 22619.0հազ. դրամ, որից համահարթեցման դոտացիան կազմում էր 15511.8հազ. դրամ:

Սեփական եկամուտներ պլանավորվել էր հավաքագրել 6507.200հազ. դրամ:

Փաստացի հավաքագրվել է 4023.891հազ. դրամ կամ 61.8%

Հողի հարկի պլան.՝ 4437.200 - Հավաքագրվել է 1713.200կամ 38.61%

Հողի վարձավճարի պլան՝ 1100.000– հավաքագրվել է 1170.000կան 106.3%
Գույքահարկ պլանավորված հազ. հավաքագրվել է 820,000կան 929,789կան113%
տեղական տուրք. պլան.150.000, հավաքագրվել է 64.450դր. կան 42.97%

Համայնքում չկա ինչպես գործող ենթակառուցվածքներ, այնպես էլ վարձակալությամբ տրված գույք:

Համայնքի բյուջեի փաստացի կատարողականը կազմել է 19535,69դր.կան 84.87%
Համայնքը առ 01.01.2011թ. ուներ 1760.000դր. աշխատավարձի և1443.0 դր. սոց վճարի
ապառք:Այն ինչպես պլանավորվել էր, տարվա ընթացքում ամբողջությամբ մարվեց: Ներկայումս
գյուղապետարանը չունի ոչ մի տեսակի պարտք:

Էներգետիկ և կապի ծառայության համար նախատեսվել էր ծախսել 480.000դրամ. փաստացի
ծախսվել է 391.000դրամ:

Համակարգչային ծառայության համար նախատեսվել է 170.000դրամ, ծախսվել է 35.000 հազ.
դրամ, տեղեկատվական և մասնագիտական ծառայության համար նախատեսվել է 160.000 դր.
փաստացի ծախսվել է 146.800դր:Գրասենյակային նյութերի ու գույքի ձեռքբերման համար
նախատեսվել է 510.000դր. փաստացի ծախսվել է 371.4 00 դր: Սոցիալապես անապահով
ընտանիքներին, որպես օգնություն նախատեսվել էր400.000դր. փաստացի ծախսվել է 60.000
հազ. դր., որը օգնության կարգով տրվել է 2 ընտանիքների:

Համայնքը ներկայացվել է տարբեր անձանց հետ փոխհարաբերություններում: Կազմակերպվել
և աջակցություն է ցուցաբերվել զորահավաքներին ու վարժական հավաքներին: Համայնքի
հողերի ժամանակավոր սխեմային համապատասխան մրցույթով վարձակալությամբ տալու
որոշում է կայացվել, հաստատվել ավագանու կողմից և տրամադրվել բնակչությանը:
Սահմանված կարգով կազմվել է համայնքի հողային հաշվեկշիռը,որը 2011թ-ից ավելացել է
2660հա,որից 202հա վարելահող՝ 743 հա խոտհարք,1561հա՝ այլ հողատեսք,գ.նշանակ այլ
հողեր 5,0հա , և ջրային 7.22հա: Իրականացվել է համայնքային սեփականություն հանդիսացող
անշարժ գույքի տարեկան հաշվառումը:

Կազմակերպվել է համայնքային ենթակայության ճանապարհների պահպանումն ու
շահագործումը: «Հազարամյակի մարտահրավերներ» հիմնադրամի միջոցներով ցկացվել է
շուրջ 1625գ/ծմ. ոռոգման երրորդ կարգի ջրատարը,ոռոգելի դարձնելով ավելի քան 127հա
վարելահող: Ծրագրի իրականացման համար համայնքի կողմից ներդրվեց 6005,000 դրամ:
Ծրագրի շինարարությունը տևեց ավելի քան յոթ ամիս, որի ընթացքում համայնքի տասներկու
երիտասարդներ,որոնք արտագնա աշխատանքի գնալու միտում ունեին ներգրավվեցին
շինարարական աշխատանքներին մնալով համայնքում: Մշակվել է առևտրի ոլորտին
գործունեության համայնքային կանոնները, վերահսկում իրականացնելով դրանց նկատմամբ:
Սերտ Համագործակցում նք «Վորլդ Վիժեն» կազմակերպության հետ,որի միջոցներով
համայնքի շուրջ11 ընտանիքների տրամադրվել է տարբեր տիպի օգնություն:

Համայնքում մեծ շուքով նշվեց հանրապետությունում տեղական ինքնակառավարման մարմինների կայացման տասնհինգ ամյակը: Գյուղի մշակույթի տան գործունեության շնորհիվ՝ հանձինս «Բասեն» ազգագրական երգի-պարի համույթի մեծ խանդավառությամբ նշվեցին հանրապետության անկախության ու համբարձման տոները, ինչը համայնքում վաղուց ավանդույթ է դարձել: Տարեվերջին համընդանուր կարգով նշվեց ամանորյա տոնակատարությունները, որին մասնակցեցին մեծերն ու փոքրերը: Այդ միջոցառումների անցկացման համար գյուղապետարանը տրամադրեց 720,000 դրամ:

Գյուղատնտեսության և անասնապահության ոլորտը, որում զբաղված է համայնքի գրեթե ողջ բնակչությունը, ամենամեծ ուշադրություն պահանջող ոլորտն է: Բնակչության սոցիալ-տնտեսական միջոցների բացակայության պատճառով ավելացել է չմշակվող հողերի քանակը, ինչպես նաև կրճատվել խոշոր և մանր եղջերավոր անասունների գլխաքանակը: Տարվա ընթացքում համագործակցելով ջրային տնտեսության հետ հնարավոր եղավ մաքրել ճալա կոչվող 52 հա սեփականաշնորհված խոտհարքի երկու կողմով անցնող գետերի հուններն ու միջանկյալ առվակները, ինչի շնորհիվ տարածքը չորացել է ճահճացումից և 2012թ-ին հնարավոր է արոտավայրի վերածված տարածքը օտագործել որպես խոտհարք: Համայնքի բնակչության ներկա սոցիալ-տնտեսական վիճակը հեռու է բավարար լինելուց: Բազմաթիվ են համայնքում օրախնդիր լուծում պահանջող հարցերը: Համայնքային տան, գյուղը մայրուղուն կապող ճանապարհի անմխիթար վիճակը, մանկապարտեզի ու դպրոցի անավարտ մասնաշենքի հիմնանորոգման խնդիրները: Վիճակը մասամբ կշտկվի անասնապահության ոլորտում, համայնքը ընդգրկելով գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրում: Համապատասխան ներդրում ապահովելու պարագայում 2012թ-ի ընթացքում նախատեսվել է ջրարբիացնել գյուղի արոտավայրերը, անցկացնելով ավելի քան 7,5 կմ. ջրատար, հիմնանորոգելով ևս 800 գծմ.: Նախատեսվել է Հայաստան Համահայկական Հիմնադրանցի միջոցներով հիմնանորոգել գյուղի միակ համայնքային տունը, որում ներառված են գյուղապետարանը, ակունքն ու գրադարանը: Համայնքը բազմաթիվ ու բազմապիսի չլուծված խնդիրներ ունի, չունենալով դրանց լուծման համար անհրաժեշտ ֆինանսական և նյութական միջոցներ: Խիստ անհրաժեշտ է պետական հոգացությունը գյուղի հանդեպ, որը կնպաստի արտագաղթի կասեցմանն ու գյուղի պահպանմանը: